# ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N « ՍՄԿԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/1.1»

ք. Կապան

«17» մարտ 2021 թ.

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Կարեն Մելքոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՆԱԵՎ»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Ներսիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:ՄԱՆԱԳԻՐ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սրակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1379973 ( մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը

---

[21] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գին նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

***Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջական խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:***

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

Եթե պայմանագրերը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ | «ՆԱԵՎ»ՍՊԸ |
| ՀՀ, ք. Կապան, Ա. Ստեփանյան13 | ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արագած 8-րդ փող. 6/2 տուն |
| Բանկ «Ամերիաբանկ»ՓԲԸ | Բանկ «Ամերիաբանկ»ՓԲԸ |
| Հ/Հ 1570026303980100 | Հ/Հ 1570025345410100 |
| ՀՎՀՀ 09420382 | ՀՎՀՀ 05022204 |
| Տնօրեն [illegible] | Տնօրեն Լիլիթ Սարգսյան |
| ------------------------------ | ------------------------------ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված
« 17 » մարտ 2021 թ. կնքված
ՍՄԿԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/1.1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 22451180/1 | Բնակչի այցի հաշվառման ձև / հավելված 3/ ՀՀ ԱՆ նախարարի 2008թ. սեպտեմբերի 24-ի №17-Ն հրամանի/ | հատ | 3.295 | 164750 | 50000 | ք.Կապան, Մ.Ստեփանյան 13 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2021թ. դեկտեմբերի 25-ը |
| 2 | 22451180/2 | Բժշկի կողմից վարվող ԱԱՊ ծառայությունների մատուցման հաշվառման ձևի գրանցման մատյան / 200 թերթից/ | հատ | 885 | 17700 | 20 | | |
| 4 | 22451180/4 | ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկի ընտրության կամ այդ ընտրության փոփոխության գրանցման ձև / հավելված 2/ ՀՀ ԱՆ 26.02.2018թ. № 502-Ա հրամանի | հատ | 3 | 5000 | 1500 | | |
| 8 | 22451180/8 | Առողջության առաջնային պահպանման ծառայությունների մատուցման հաշվառման ձև N002 ՀՀԱՆ 03,07,2013թ. N35-Ն հրաման / համարակալված՝ 1-ից | հատ | 3.2 | 128000 | 40000 | | |
| 9 | 22451180/9 | Արգանդի պարանոցի ցիտոլոգիական հետազոտություն / ըստ նմուշի Ա4 / | հատ | 3.39 | 3390 | 1000 | | |
| 10 | 22451180/10 | Բաժանմունքներում դեղերի և ԲՆԱ-ի քանակագումարային հաշվառման ձև՝ ակտ N 4 26.01.2007թ N 121 Ա հրաման | հատ | 3.39 | 3390 | 1000 | | |
| 11 | 22451180/11 | Բաժանմունքներում դեղերի և ԲՆԱ-ի քանակագումարային հաշվառման ձև՝ հաշվետվություն N5 28.12.2005թ. N 1391 Ա հրամանովԲաժանմունքներում դեղերի և ԲՆԱ-ի քանակագումարային հաշվառման ձև՝ հաշվետվություն N5 28.12.2005թ. N 1391 Ա հրամանով | հատ | 3.295 | 9885 | 3000 | | |
| 13 | 22451180/13 | Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն՝ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԻ Ձև N 3 /200 թերթ / | հատ | 920 | 9200 | 10 | | |
| 16 | 22451180/16 | Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտից քաղվածք / հավելված 6 / 03.07.2013 թ ՀՀ ԱՆ № 35-Ն հրաման | հատ | 1.51 | 7550 | 5000 | | |
| 21 | 22451180/21 | Իմունաբանական լաբորատորիա ձև N 1 / Շճաբանական հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.6 | 1600 | 1000 | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 22 | 22451180/22 | Իմունաբանական լաբորատորիա ձև N 2 / Շճաբանական հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.6 | 1600 | 1000 | | |
| 23 | 22451180/23 | Իմունաբանական լաբորատորիա ձև N 3 / Շճաբանական հետազոտություն `վիրուսային ինֆեկցիաների/ ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.6 | 1600 | 1000 | | |
| 25 | 22451180/25 | Իմունաբանական լաբորատորիա ձև N 5 / Շճաբանական հետազոտություն / ՀՀԱՆ 21.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.49 | 14900 | 10000 | | |
| 26 | 22451180/26 | Իմունաբանական լաբորատորիա ձև N 6 / Շճաբանական հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.6 | 1600 | 1000 | | |
| 27 | 22451180/27 | Իմունաբանական լաբորատորիա ձև N 8 / Հորմոնների հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.495 | 7475 | 5000 | | |
| 28 | 22451180/28 | Իրազեկման թերթիկ անվճար բուժօգնության մասին ՀՀԱՆ 18,12,2013 N3274-Ա հրաման հավելված1 | հատ | 3.295 | 23065 | 7000 | | |
| 30 | 22451180/30 | Կենսաքիմիական լաբորատորիա ձև N 1 /Արյան կենսաքիմիական հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.495 | 7475 | 5000 | | |
| 31 | 22451180/31 | Կենսաքիմիական լաբորատորիա ձև N 5 /Արյան էլեկտրոլիտների հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.7 | 850 | 500 | | |
| 32 | 22451180/32 | Կենսաքիմիական լաբորատորիա ձև N 8 /Արյան կենսաքիմիական հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.495 | 7475 | 5000 | | |
| 33 | 22451180/33 | Կենսաքիմիական լաբորատորիա ձև № 7 / կոագուլոգրամա/ ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.48 | 74000 | 50000 | | |
| 34 | 22451180/34 | Կլինիկական լաբորատորի ձև № 2 / Արյունաբանական հետազոտություն/ ՀՀԱՆ 21.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.6 | 1600 | 1000 | | |
| 36 | 22451180/36 | Կլինիկական լաբորատորիա ձև N 10 / Մանրադիտակային հետազոտություն / ՀՀԱՆ 21.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.48 | 37000 | 25000 | | |
| 37 | 22451180/37 | Կլինիկական լաբորատորիա ձև N 11 / Արյան հետազոտություն / ՀՀԱՆ 21.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.48 | 74000 | 50000 | | |
| 38 | 22451180/38 | Կլինիկական լաբորատորիա ձև N 7 /Միզասեռական ուղիների արտադրության մանրադիտակային հետազոտություն / ՀՀԱՆ 21.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.48 | 74000 | 50000 | | |
| 39 | 22451180/39 | Կլինիկական լաբորատորիա ձև N12 / Մեզի հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | հատ | 1.48 | 88800 | 60000 | | |
| 41 | 22451180/41 | Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման ձև 0001 ՀՀ ԱՆ 2011թ. 24.01.2011թ. N63 հրամանի | հատ | 3.295 | 32950 | 10000 | | |
| 42 | 22451180/42 | Հղիի հսկողության պարտադիր ծավալների հաշվառման ձև 005 ՀՀ ԱՆ 04.02.2015թ. № 03 հրամանի | հատ | 3.39 | 9153 | 2700 | | |
| 43 | 22451180/43 | Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N1 ձև հավելված N8 ՀՀԱՆ 06.05.2014թ. N 16-Ն հրաման | հատ | 3.295 | 9885 | 3000 | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 44 | 22451180/44 | Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N2 ձև հավելված N9 ՀՀԱՆ 06.05.2014թ. N 16-Ն հրաման | հատ | 3.295 | 9885 | 3000 | | |
| 45 | 22451180/45 | Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N3 ձև հավելված N 10 ՀՀԱՆ 06.05.2014թ. N 16-Ն հրաման | հատ | 3.295 | 9885 | 3000 | | |
| 48 | 22451180/49 | Մատյան բուժհաստատությունների բաժանմունքներում /կաբինետներում/դեղերի և ԲՆԱ-Ի քանակական հաշվառման N3, 200 էջ | հատ | 197.7 | 9885 | 50 | | |
| 49 | 22451180/50 | Մատյան բուժհաստատությունների բաժանմունքներում հերթապահ բ/քրոջ դեղերի և ԲՆԱ-Ի քանակական հաշվառման N6 200 էջ | հատ | 197.7 | 9885 | 50 | | |
| 50 | 22451180/51 | Մարդատար ավտոմեքենայի երթուղային թերթ | հատ | 1.5 | 3000 | 2000 | | |
| 51 | 22451180/52 | Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտերի շրջանառության հաշվառման մատյան 200 թերթ | հատ | 903.3 | 5420 | 6 | | |
| 52 | 22451180/53 | Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտից քաղվածք / հավելված 3/ 03.07.2013թ ՀՀ ԱՆ № 35-Ն հրաման | հատ | 1.48 | 74000 | 50000 | | |
| 54 | 22451180/55 | Մուտքագրող օպերատորի կողմից վարվող ԱԱՊ ծառայությունների մատուցման հաշվառման ձևի գրանցման մատյան 200 թերթ | հատ | 950 | 2850 | 3 | | |
| 56 | 22451180/57 | Նշանակման թերթիկ | հատ | 3.295 | 49425 | 15000 | | |
| 57 | 22451180/58 | Նորածնի դուրս գրման տեղեկացման թերթիկ ՀՀ ԱՆ 01.11.2013թ. N70-Ն | հատ | 3.4 | 1700 | 500 | | |
| 58 | 22451180/59 | Շտապ բժշկական օգնության կտրոն/ ուղեկցող թերթիկ/ 114-ու | հատ | 3.295 | 23065 | 7000 | | |
| 59 | 22451180/60 | Շտապ օգնության կանչերի գրանցման գիրք 100 էջ | հատ | 550 | 5500 | 10 | | |
| 60 | 22451180/61 | Շտապ օգնության կանչերի գրանցման գիրք 200 էջ | հատ | 903.33 33333 | 5420 | 6 | | |
| 62 | 22451180/63 | Ուլտրաձայնային/սոնոգրաֆիկ/ հետազորության ձև | հատ | 3.3 | 16500 | 5000 | | |
| 67 | 22451180/68 | Սոց փաթեթի շահառուի տեղեկանք / հավելված N2 / ՀՀԱՆ 10.02.2015թ.05-Ն հրաման | հատ | 1.5 | 3000 | 2000 | | |
| 68 | 22451180/69 | Վիճակագրական քարտ ձև 066/ու | հատ | 1.49 | 8940 | 6000 | | |
| 69 | 22451180/70 | Վտանգի նշանները նորածնի մոտ ,որոնց առկայության դեպքում մայրը պետք է դիմի բժշկիՀՀ ԱՆ 01.12.2013թ. N78-Ն | հատ | 3.5 | 1750 | 500 | | |
| 71 | 22451180/72 | Քաղվածք ամբուլատոր, ստացիոնար հիվանդի քարտից ըստ նմուշի Ա4 | հատ | 3.295 | 19770 | 6000 | | |
| 72 | 22451180/75 | A 4 միակողմանի տպագրություն, տառերը և գծերը սև գույնի՝ յուրաքանչյուր անգամ պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի համապատասխան | հատ | 3.295 | 98850 | 30000 | | |
| 73 | 22451180/76 | A 4 տպագրություն երկկողմանի տպված, տառերը և գծերը սև գույնի՝ յուրաքանչյուր անգամ պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի համապատասխան | հատ | 3.295 | 98850 | 30000 | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 74 | 22451180/77 | A 5 միակողմանի տպագրություն, տառերը և գծերը սև գույնի՝ յուրաքանչյուր անգամ պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի համապատասխան | հատ | 1.48 | 29600 | 20000 | | |
| 75 | 22451180/78 | A 5 տպագրություն երկկողմանի տպված, տառերը և գծերը սև գույնի՝ յուրաքանչյուր անգամ պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի համապատասխան | հատ | 1.51 | 30200 | 20000 | | |
| 76 | 22451180/79 | Մատյան A4 չափի 100թերթ կոշտ կազմով, կարված կնիքի տեղով, թուղթը օֆսեթ 80գ/մ2 չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, սպիտակությունը 90% ոչ պակաս | հատ | 600 | 18000 | 30 | | |
| 77 | 22451180/80 | Մատյան A4 չափի 200թերթ կոշտ կազմով, կարված կնիքի տեղով, թուղթը օֆսեթ 80գ/մ2 չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, սպիտակությունը 90% ոչ պակաս | հատ | 890 | 26700 | 30 | | |

*Պատվիրատուի կողմից Կատարողին է ներկայացվում պահանջվող ձևաթղթերի նմուշները՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով: Պահանջվող ձևաթղթերը Կատարողի կողմից ձևավորվելուց և յուրաքանչյուր ձևաթղթերի մեկական օրինակը տալուց հետո դրանք համաձայնեցվում են Պատվիրատուի հետ:Ապրանքը հասցվում է Պատվիրատուին Կատարողի կողմից: Պատվիրատուի կողմից Ապրանքի ամբողջությամբ կամ մի մասի համար պահանջ չներկայացնելու դեպքում պայմանագիրը այդ մասով համարվում է լուծված:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
ՀՀ, ք. Կապան, Մ. Ստեփանյան13
Բանկ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն Կարեն Մելքոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՆԱԵՎ»ՍՊԸ
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արագած 8-րդ փող. 6/2 տուն
Բանկ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570025345410100
ՀՎՀՀ 05022204
Տնօրեն Լիլիթ Ներսիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Աշխատանքի | | | | | | | | | | ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | |
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 22451180/1 | Բնակչի այցի հաշվառման ձև / հավելված 3/ ՀՀ ԱՆ նախարարի 2008թ. սեպտեմբերի 24-ի №17-Ն հրամանի/ | 16475 | 32950 | 49425 | 65900 | 82375 | 98850 | 115325 | 131800 | 148275 | 164750 | 164750 |
| 2 | 22451180/2 | Բժշկի կողմից վարվող ԱԱՊ ծառայությունների մատուցման հաշվառման ձևի գրանցման մատյան / 200 թերթից/ | 1770 | 3540 | 5310 | 7080 | 8850 | 10620 | 12390 | 14160 | 15930 | 17700 | 17700 |
| 4 | 22451180/4 | ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկի ընտրության կամ այդ ընտրության փոփոխության գրանցման ձև / հավելված 2/ ՀՀ ԱՆ 26.02.2018թ. № 502-Ա հրամանի | 500 | 1000 | 1500 | 2000 | 2500 | 3000 | 3500 | 4000 | 4500 | 5000 | 5000 |
| 8 | 22451180/8 | Առողջության առաջնային պահպանման ծառայությունների մատուցման հաշվառման ձև N002 ՀՀԱՆ 03.07.2013թ. N35-Ն հրաման / համարակալված՝ 1-ից | 12800 | 25600 | 38400 | 51200 | 64000 | 76800 | 89600 | 102400 | 115200 | 128000 | 128000 |
| 9 | 22451180/9 | Արգանդի պարանոցի ցիտոլոգիական հետազոտություն / ըստ նմուշի Ա4 / | 339 | 678 | 1017 | 1356 | 1695 | 2034 | 2373 | 2712 | 3051 | 3390 | 3390 |
| 10 | 22451180/10 | Բաժանմունքներում դեղերի և ԲՆԱ-ի քանակագումարային հաշվառման ձև ակտ N 4 26.01.2007թ N 121 Ա հրաման | 339 | 678 | 1017 | 1356 | 1695 | 2034 | 2373 | 2712 | 3051 | 3390 | 3390 |
| 11 | 22451180/11 | Բաժանմունքներում դեղերի և ԲՆԱ-ի քանակագումարային հաշվառման ձև՝ հաշվետվություն N5 28.12.2005թ. N 1391 Ա հրամանովԲաժանմունքներում դեղերի և ԲՆԱ-ի քանակագումարային հաշվառման ձև՝ հաշվետվություն N5 28.12.2005թ. N 1391 Ա հրամանով | 988.5 | 1977 | 2965.5 | 3954 | 4942.5 | 5931 | 6919.5 | 7908 | 8896.5 | 9885 | 9885 |
| 13 | 22451180/13 | Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն՝ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԻ Ձև N 3 /200 թերթ / | 920 | 1840 | 2760 | 3680 | 4600 | 5520 | 6440 | 7360 | 8280 | 9200 | 9200 |
| 16 | 22451180/16 | Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտից քաղվածք / հավելված 6 / 03.07.2013 թ ՀՀ ԱՆ № 35-Ն հրաման | 755 | 1510 | 2265 | 3020 | 3775 | 4530 | 5285 | 6040 | 6795 | 7550 | 7550 |
| 21 | 22451180/21 | Իմունաբանական լաբորատորիա ձև N 1 / Շճաբանական հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | 160 | 320 | 480 | 640 | 800 | 960 | 1120 | 1280 | 1440 | 1600 | 1600 |
| 22 | 22451180/22 | Իմունաբանական լաբորատորիա ձև N 2 / Շճաբանական հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | 160 | 320 | 480 | 640 | 800 | 960 | 1120 | 1280 | 1440 | 1600 | 1600 |
| 23 | 22451180/23 | Իմունաբանական լաբորատորիա ձև N 3 / Շճաբանական հետազոտություն վիրուսային ինֆեկցիաների/ ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | 160 | 320 | 480 | 640 | 800 | 960 | 1120 | 1280 | 1440 | 1600 | 1600 |
| 25 | 22451180/25 | Իմունաբանական լաբորատորիա ձև N 5 / Շճաբանական հետազոտություն / ՀՀԱՆ 21.11.2013թ.N76-Ն հրաման | 1490 | 2980 | 4470 | 5960 | 7450 | 8940 | 10430 | 11920 | 13410 | 14900 | 14900 |
| 26 | 22451180/26 | Իմունաբանական լաբորատորիա ձև N 6 / Շճաբանական հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | 160 | 320 | 480 | 640 | 800 | 960 | 1120 | 1280 | 1440 | 1600 | 1600 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 27 | 22451180/27 | Իմունաբանական լաբորատորիա ձև N 8 / Հորմոնների հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | 747.5 | 1495 | 2242.5 | 2990 | 3737.5 | 4485 | 5232.5 | 5980 | 6727.5 | 7475 | |
| 28 | 22451180/28 | Իրազեկման թերթիկ անվճար բուժօգնության մասին ՀՀԱՆ 18,12.2013 N3274-Ա հրաման հավելված1 | 2306.5 | 4613 | 6919.5 | 9226 | 11532.5 | 13839 | 16145.5 | 18452 | 20758.5 | 23065 | 23065 |
| 30 | 22451180/30 | Կենսաքիմիական լաբորատորիա ձև N 1 /Արյան կենսաքիմիական հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | 747.5 | 1495 | 2242.5 | 2990 | 3737.5 | 4485 | 5232.5 | 5980 | 6727.5 | 7475 | 7475 |
| 31 | 22451180/31 | Կենսաքիմիական լաբորատորիա ձև N 5 /Արյան էլեկտրոլիտների հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | 85 | 170 | 255 | 340 | 425 | 510 | 595 | 680 | 765 | 850 | 850 |
| 32 | 22451180/32 | Կենսաքիմիական լաբորատորիա ձև N 8 /Արյան կենսաքիմիական հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | 747.5 | 1495 | 2242.5 | 2990 | 3737.5 | 4485 | 5232.5 | 5980 | 6727.5 | 7475 | 7475 |
| 33 | 22451180/33 | Կենսաքիմիական լաբորատորիա ձև № 7 / կոագուլոգրամա/ ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | 7400 | 14800 | 22200 | 29600 | 37000 | 44400 | 51800 | 59200 | 66600 | 74000 | 74000 |
| 34 | 22451180/34 | Կլինիկական լաբորատորի ձև № 2 / Արյունաբանական հետազոտություն/ ՀՀԱՆ 21.11.2013թ.N76-Ն հրաման | 160 | 320 | 480 | 640 | 800 | 960 | 1120 | 1280 | 1440 | 1600 | 1600 |
| 36 | 22451180/36 | Կլինիկական լաբորատորիա ձև N 10 / Մանրադիտակային հետազոտություն / ՀՀԱՆ 21.11.2013թ.N76-Ն հրաման | 3700 | 7400 | 11100 | 14800 | 18500 | 22200 | 25900 | 29600 | 33300 | 37000 | 37000 |
| 37 | 22451180/37 | Կլինիկական լաբորատորիա ձև N 11 / Արյան հետազոտություն / ՀՀԱՆ 21.11.2013թ.N76-Ն հրաման | 7400 | 14800 | 22200 | 29600 | 37000 | 44400 | 51800 | 59200 | 66600 | 74000 | 74000 |
| 38 | 22451180/38 | Կլինիկական լաբորատորիա ձև N 7 /Միզասեռական ուղիների արտադրության մանրադիտակային հետազոտություն / ՀՀԱՆ 21.11.2013թ.N76-Ն հրաման | 7400 | 14800 | 22200 | 29600 | 37000 | 44400 | 51800 | 59200 | 66600 | 74000 | 74000 |
| 39 | 22451180/39 | Կլինիկական լաբորատորիա ձև N12 / Մեզի հետազոտություն / ՀՀԱՆ 25.11.2013թ.N76-Ն հրաման | 8880 | 17760 | 26640 | 35520 | 44400 | 53280 | 62160 | 71040 | 79920 | 88800 | 88800 |
| 41 | 22451180/41 | Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման ձև 0001 ՀՀ ԱՆ 2011թ. 24.01.2011թ. N63 հրամանի | 3295 | 6590 | 9885 | 13180 | 16475 | 19770 | 23065 | 26360 | 29655 | 32950 | 32950 |
| 42 | 22451180/42 | Հղիի հսկողության պարտադիր ծավալների հաշվառման ձև 005 ՀՀ ԱՆ 04.02.2015թ. № 03 հրամանի | 915.3 | 1830.6 | 2745.9 | 3661.2 | 4576.5 | 5491.8 | 6407.1 | 7322.4 | 8237.7 | 9153 | 9153 |
| 43 | 22451180/43 | Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N1 ձև հավելված N8 ՀՀԱՆ 06.05.2014թ. N 16-Ն հրաման | 988.5 | 1977 | 2965.5 | 3954 | 4942.5 | 5931 | 6919.5 | 7908 | 8896.5 | 9885 | 9885 |
| 44 | 22451180/44 | Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N2 ձև հավելված N9 ՀՀԱՆ 06.05.2014թ. N 16-Ն հրաման | 988.5 | 1977 | 2965.5 | 3954 | 4942.5 | 5931 | 6919.5 | 7908 | 8896.5 | 9885 | 9885 |
| 45 | 22451180/45 | Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N3 ձև հավելված N 10 ՀՀԱՆ 06.05.2014թ. N 16-Ն հրաման | 988.5 | 1977 | 2965.5 | 3954 | 4942.5 | 5931 | 6919.5 | 7908 | 8896.5 | 9885 | 9885 |
| 48 | 22451180/49 | Մատյան բուժհաստատությունների բաժանմունքներում /կաբինետներում/դեղերի և ԲՆԱ-Ի քանակական հաշվառման N3, 200 էջ | 988.5 | 1977 | 2965.5 | 3954 | 4942.5 | 5931 | 6919.5 | 7908 | 8896.5 | 9885 | 9885 |
| 49 | 22451180/50 | Մատյան բուժհաստատությունների բաժանմունքներում հերթապահ բ/քրոջ դեղերի և ԲՆԱ-Ի քանակական հաշվառման N6 200 էջ | 988.5 | 1977 | 2965.5 | 3954 | 4942.5 | 5931 | 6919.5 | 7908 | 8896.5 | 9885 | 9885 |
| 50 | 22451180/51 | Մարդատար ավտոմեքենայի երթուղային թերթ | 300 | 600 | 900 | 1200 | 1500 | 1800 | 2100 | 2400 | 2700 | 3000 | 3000 |
| 51 | 22451180/52 | Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտերի շրջանառության հաշվառման մատյան 200 թերթ | 542 | 1084 | 1626 | 2168 | 2710 | 3252 | 3794 | 4336 | 4878 | 5420 | 5420 |
| 52 | 22451180/53 | Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտից քաղվածք / հավելված 3/ 03.07.2013թ ՀՀ ԱՆ № 35-Ն հրաման | 7400 | 14800 | 22200 | 29600 | 37000 | 44400 | 51800 | 59200 | 66600 | 74000 | 74000 |
| 54 | 22451180/55 | Մուտքագրող օպերատորի կողմից վարվող ԱԱՊ ծառայությունների մատուցման հաշվառման ձևի գրանցման մատյան 200 թերթ | 285 | 570 | 855 | 1140 | 1425 | 1710 | 1995 | 2280 | 2565 | 2850 | 2850 |
| 56 | 22451180/57 | Նշանակման թերթիկ | 4942.5 | 9885 | 14827.5 | 19770 | 24712.5 | 29655 | 34597.5 | 39540 | 44482.5 | 49425 | 49425 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 57 | 22451180/58 | Նորածնի դուրս գրման տեղեկացման թերթիկ ՀՀ ԱՆ 01.11.2013թ. N70-Ն | 170 | 340 | 510 | 680 | 850 | 1020 | 1190 | 1360 | 1530 | 1700 | |
| 58 | 22451180/59 | Շտապ բժշկական օգնության կտրոն/ ուղեկցող թերթիկ/ 114-ու | 2306.5 | 4613 | 6919.5 | 9226 | 11532.5 | 13839 | 16145.5 | 18452 | 20758.5 | 23065 | 23065 |
| 59 | 22451180/60 | Շտապ օգնության կանչերի գրանցման գիրք 100 էջ | 550 | 1100 | 1650 | 2200 | 2750 | 3300 | 3850 | 4400 | 4950 | 5500 | 5500 |
| 60 | 22451180/61 | Շտապ օգնության կանչերի գրանցման գիրք 200 էջ | 542 | 1084 | 1626 | 2168 | 2710 | 3252 | 3794 | 4336 | 4878 | 5420 | 5420 |
| 62 | 22451180/63 | Ռենտգենյան/սոնոգրաֆիկ/ հետազոտության ձև | 1650 | 3300 | 4950 | 6600 | 8250 | 9900 | 11550 | 13200 | 14850 | 16500 | 16500 |
| 67 | 22451180/68 | Սոց փաթեթի շահառուի տեղեկանք / հավելված N2 / ՀՀԱՆ 10.02.2015թ.05-Ն հրաման | 300 | 600 | 900 | 1200 | 1500 | 1800 | 2100 | 2400 | 2700 | 3000 | 3000 |
| 68 | 22451180/69 | Վիճակագրական քարտ ձև 066/ու | 894 | 1788 | 2682 | 3576 | 4470 | 5364 | 6258 | 7152 | 8046 | 8940 | 8940 |
| 69 | 22451180/70 | Կտանզի նշանները նորածնի մոտ ,որոնց առկայության դեպքում մայրը պետք է դիմի բժշկի ՀՀ ԱՆ 01.12.2013թ. N78-Ն | 175 | 350 | 525 | 700 | 875 | 1050 | 1225 | 1400 | 1575 | 1750 | 1750 |
| 71 | 22451180/72 | Քաղվածք ամբուլատոր, ստացիոնար հիվանդի քարտից ըստ նմուշի Ա4 | 1977 | 3954 | 5931 | 7908 | 9885 | 11862 | 13839 | 15816 | 17793 | 19770 | 19770 |
| 72 | 22451180/75 | A 4 միակողմանի տպագրություն. տառերը և գծերը սև գույնի` յուրաքանչյուր անգամ պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի համապատասխան | 9885 | 19770 | 29655 | 39540 | 49425 | 59310 | 69195 | 79080 | 88965 | 98850 | 98850 |
| 73 | 22451180/76 | A 4 տպագրություն երկկողմանի տպված. տառերը և գծերը սև գույնի `յուրաքանչյուր անգամ պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի համապատասխան | 9885 | 19770 | 29655 | 39540 | 49425 | 59310 | 69195 | 79080 | 88965 | 98850 | 98850 |
| 74 | 22451180/77 | A 5 միակողմանի տպագրություն, տառերը և գծերը սև գույնի` յուրաքանչյուր անգամ պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի համապատասխան | 2960 | 5920 | 8880 | 11840 | 14800 | 17760 | 20720 | 23680 | 26640 | 29600 | 29600 |
| 75 | 22451180/78 | A 5 տպագրություն երկկողմանի տպված. տառերը և գծերը սև գույնի `յուրաքանչյուր անգամ պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի համապատասխան | 3020 | 6040 | 9060 | 12080 | 15100 | 18120 | 21140 | 24160 | 27180 | 30200 | 30200 |
| 76 | 22451180/79 | Մատյան A4 չափի 100թերթ կոշտ կազմով, կարված կնիքի տեղով, Թուղթը օֆսեթ 80գ/մ2 չկավճած թուղթ. օգտագործվում է տպագրման համար. թելիկներ չպարունակող, սպիտակությունը 90% ոչ պակաս | 1800 | 3600 | 5400 | 7200 | 9000 | 10800 | 12600 | 14400 | 16200 | 18000 | 18000 |
| 77 | 22451180/80 | Մատյան A4 չափի 200թերթ կոշտ կազմով, կարված կնիքի տեղով, Թուղթը օֆսեթ 80գ/մ2 չկավճած թուղթ. օգտագործվում է տպագրման համար. թելիկներ չպարունակող, սպիտակությունը 90% ոչ պակաս | 2670 | 5340 | 8010 | 10680 | 13350 | 16020 | 18690 | 21360 | 24030 | 26700 | 26700 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
ՀՀ, ք. Կապան, Մ. Ստեփանյան13
Բանկ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն [illegible]

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՆԱԵՎ»ՍՊԸ
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արագած 8-րդ փող. 6/2 տուն
Բանկ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570025345410100
ՀՎՀՀ 05022204
Տնօրեն Լիլիթ Ներսիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.